

ՄԱՂՄՈՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Արդարը և ամբարշտը հակադրված	Արդարի ճանապարհը և անաստվածի վախճանը	Արդարի և ամբարշտի հակադրված վիճակները (իմաստության սաղմոս)	Իրական երջանկությունը	Երկու շավիղները
MT ներածական չկա				
1:1-3	1:1-3	1:1-3	1:1-3	1:1-2 1:3-4ա
1:4-6	1:4-6	1:4-6	1:4-6	1:4բ-6

*Չնայած որ դրանք ներշնչված չեն, պարբերությունների բաժանումները կարևոր են բնագրի հեղինակի մտադրությունը հասկանալու և դրան հետևելու համար: Ժամանակակից յուրաքանչյուր թարգմանություն բաժանել և ամփոփել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մի կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ գաղափար: Յուրաքանչյուր տարբերակ պարփակում է այդ թեման իրեն իսկ հատուկ առանձնակի կերպով: Երբ կարդում եք տեքստը, հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմայի և համարի բաժանման ձեր հասկացողությանը: Յուրաքանչյուր գլխում մենք առաջինը պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք առանձնացնել դրա թեմաները (պարբերությունները), ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրապես հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ կհասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը՝ հետևելով նրա տրամաբանության ու ներկայացնելու ձևին: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն ուղերձը փոփոխելու կամ խմբագրելու: Աստվածաշնչի ընթերցողները պարտավոր են կիրառելու իրենց օրերի և կյանքերի համար այդ ներշնչված ճշմարտությունները:

Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները մանրամասն բացատրվում են հետևյալ փաստաթղթերում՝ Հունարեն Քերականական Կազմությունների Համառոտ Սահմանումները, Տեքստային քննադատություն, և Բառարան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրք Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀՆԴԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրք Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա ընդհանուր ներածություն է ամբողջ Սամուսագրքի համար: Քայլ Յեթսը իր հրաշալի *Քարոզներ Սաղմոսներից* գրքում, էջ՝ 115-124, ասում է, որ այս սաղմոսը նկարագրում է «թագավորության մարդուն»:

1. նրա բնավորությունը
2. նրա ազդեցիկությունը
3. նրա վարքը
4. նրա բախտը՝ վիճակը

Բ. Այս Սաղմոսը արտահայտում է ավանդական հրեական ուսմունք, որ այս կյանքում արդարը օրհնվելու է, իսկ ամբարիշտը՝ պատժվելու (այսինքն՝ երկու ճանապարհները, տես՝ 2 Օր. 30:1, 15-20): Այս տեսակի մարդիկ նաև նկարագրվում են Երեմ. 17:5-8-ում:

Գ. Հիսուսն ըստ երևույթին գործածեց Սաղմոս 1-ը որպես իր Լեռան Քարոզի հիմք, Մատթևոս 5-7 գլուխներում:

Այս համատեքստում այս խոսքերը չեն ուղղվում ամբողջ մարդկությանը, այլ ուխտի մեջ մտած ժողովրդին, մարդկանց, որոնք ճանաչում էին ՅԱՀՎԵի հայտնությունը, սակայն ընտրել էին անտեսել այն: Թե՛ Մատթ. 7:13-14 նույնպես հիմնված է հավատքի այս նույն կարևոր առանձնահատկության վրա: Ստորև տրված են Մատթևոս Ավետարանի իմ մեկնաբանությունից որոշ գրառումներ:

Դուք կարող եք ամբողջական մեկնությունը գտնել www.freebiblecommentary.org հղումով:

ՄԱՏԹՎՈՍ 7

Մատթ. 7:13 Արդյո՞ք այս համարը ակնարկում է (1) դռնով մտնել և ապա այդ ճանապարհով քայլել, թե (2) քայլել այն ճանապարհով, որը տանում է դեպի դուռը, թե (3) այն համարվում է Եբրայերեն զուգահեռականության օրինակ: Այն փաստը, որ նախ նշվում է դուռը և հետո ճանապարհը, ակնարկում է, որ սա վերաբերում է մարդու կողմից անձնապես Աստծուն ճանաչելուն՝ Հիսուսի ուսմունքի միջոցով և ապա թագավորության նոր կյանքով ապրելուն: Այստեղ որոշակի շփոթություն կարող է առաջացնել աստվածաշնչյան փրկության եռապատիկ առանձնահատկությունը. (1) սկզբնական հավատք և ապաշխարություն, (2) Քրիստոսանման ապրելակերպ, (2) էսկատոլոգիական վախճանը: Այս առակը զուգահեռվում է Դուկաս 13:23-27-ի հետ: Տես՝ Հատուկ Թեմա. ՆԿ-ում Դուռ բառի կիրառությունը:

❖ «**նեղ դուռը**» Նմանատիպ առականման ճշմարտությունն ավանդապես հայտնի է եղել որպես «երկու ճանապարհները» (տես՝ 2 Օր. 30:15,19, Սաղմ. 1, Առակ. 4:10-19, Ես. 1:19-20 և Երեմ. 21:8): Դժվար է հասկանալ, թե ում նկատի ունեն է Հիսուսը. (1) աշակերտներին, (2) Փարիսեցիներին, թե՛ (3) ամբոխին: Ընդհանուր համատեքստը ակնարկում էր, որ այս համարը կապված է Մատթ. 5:20 ու Մատթ. 5:48-ի հետ: Եթե այդպես է, ապա սա ակնարկում էր, որ դռան խիստ բնույթը ոչ թե կանոններն էին, ինչպես փարիսեցիական օրինապաշտությունը, այլ սիրո ապրելակերպը, որը Քրիստոսի հետ փոխահարաբերության արդյունք է: Քրիստոսն ունի կանոններ (տես՝ Մատթ. 11:29-30), սակայն դրանք բխում են փոխված սրտից: Եթե մենք այս համարը կապենք հրեա-հեթանոս համատեքստի հետ (տես՝ Սաղմ. 6:7, 32), ապա այն կապ ունի Հիսուս Փրկչի (դուռը) և Տիրոջ (ճանապարհը) հանդեպ ունեցած հավատքի հետ:

Սկսած Մատթ. 7:13-27-ից գոյություն ունի հակադրությունների մի շարք, որոնք առնչվում են կրոնավոր մարդկանց:

1. կրոնական պարտականությունները կատարելու երկու ճանապարհները՝ կերպերը (Մատթ. 7:13-14)
2. կրոնական առաջնորդների երկու տեսակները (Մատթ. 7:15-23)
3. կրոնական կյանքի երկու հիմքերը (Մատթ. 7:24-27):

Հարցն այն չէ, թե կրոնավոր մարդկանց որ խմբին նկատի ունեն Հիսուսը, այլ թե ինչպես պետք է կրոնավոր մարդիկ արձագանքեն Աստծո կամքի իրենց հասկացողությանը: Ոմանք կրոնը օգտագործում են որպես դիմակ, որպեսզի մարդկանցից փառաբանվեն ու վարձատրվեն: Դա

«ինձ» և «հիմա» կենտրոնացումով կյանքն է (տես՝ Ես. 29:13, Կող. 2:16-23): Ծշմարիտ աշակերտները իրենց կյանքերը կարգավորում են ներկա և գալիսք Աստծո Թագավորության վերաբերյալ Հիսուսի խոսքերի համաձայն:

❖ «որովհետև լայն է դուռը և ընդարձակ այն ճամփան, որ դեպի կորուստ է տանում» «Ճամփան» կարող է լինել (1) ապրելակերպի փոխաբերություն և (2) եկեղեցու ամենաառաջին անունը (տես՝ Գործք 9:2), 19:9,23, 22:4, 24:14,22, 18:25-26): Այս համարը նկատի ունի, որ փրկությունը հեշտ որոշում չէ, որը համընկնում է տվյալ մշակույթի հոսքի ուղղությանը, այլ կյանքի վճռական փոփոխություն է, որը հանգեցնում է Աստծո սկզբունքների հնազանդության: Այն փաստը, որ մի ճանապարհը տանում է կորստյան, ցույց է տալիս Աստծուց անկախ կյանքեր ապրող մարդկանց վերջնական վախճանը: Հաճախ նրանք թվում են շատ կրոնավոր (տես՝ Ես. 29:13, Մատթ. 7:21-23, Կող. 2:23):

Այս արտահայտությունն ունի հունարեն ձեռագրին բնորոշ փոփոխական: Խոսքի առաջին մասում ասվում է. «մտե՛ք նեղ դռնով», սակայն երկրորդ կեսում «դուռը» բաց է թողնված ունցիալ * ձեռագրում, մի քանի լատիներեն ձեռագրերում, Վուլգատայի որոշ ձեռագրերում, Դիաթեսարոնում, և Կղեմեսի ու Եվսեբիոսի կողմից գործածվող հունարեն տեքստերում: Այն առկա է *¹, B, C, L, W ունցիալ ձեռագրերում և որոշ լատիներեն, Վուլգատա, Սիրիակ և Կոպտիկ ձեռագրերում: Այսպիսով հարցն այն է. «Արդյո՞ք այն ներմուծվել է բալանսի համար», թե՛ «պատահաբար դուրս է մնացել»: UBS4-ը ավելի երկար տեքստին (այսինքն՝ ներառված տարբերակը) գնահատում է “B” (գրեթե հաստատ): Սակայն, դրա ներառված կամ բացառված լինելը չի փոխում տեքստի իմաստը: Սա ճիշտ է այսօր գոյություն ունեցող հունարեն Նոր Կտակարանների 5,300 տարբերակների մեծամասնության համար: Տե՛ս Բրյուս Մեցգերի *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային մեկնաբանություն*, էջ՝ 19:

Մատթ. 7:14 «Հեշտ հավատալու» այս օրերի համար սա անհրաժեշտ բալանսավորում է: Սա ասել չէ, թե Քրիստոնեությունը կախված է մարդկային ջանքերից, այլ, որ հավատքի կյանքը լի է լինելու հավաճանքներով: «Նեղ» բառն այս համարում ունի «նեղություն» կամ «հավաճանք» բառի միևնույն արմատը ՆԿ-յան մյուս հատվածներում: Այս շեշտադրումը ճիշտ հակառակն է Մատթ. 11:29-30-ի: Այս երկու համարները կարելի է նկարագրել որպես «դուռ» և «ճանապարհ»: Մենք Աստծո մոտ ենք գալիս Հիսուսի միջոցով, որպես Աստծո ձրի պարզ (տես՝ Հռոմ. 3:24, 5:15-17, 6:23, Եփես. 2:8-9), բայց երբ ճանաչում ենք Նրան, դա թանկարժեք մարգարիտն է, որի համար մենք վաճառում ենք ամեն ինչ, որ ունենք, որպեսզի հետևենք Նրան: Փրկությունը բացարձակ ձրի է, սակայն արժէ ամեն ինչ, որ ունենք և կանք:

«Եվ քչերն են, որ գտնում են այն» արտահայտությունը պետք է համեմատել Մատթ. 7:13-ի և Դուկ. 13:23-24-ի հետ: Հարց է առաջանում «ավելի շատ մարդիկ կորսվելու են, քան փրկվելո՞ւ»: Արդյո՞ք այս համարը սովորեցնում է թվաքանակի տարբերությունը:

- Դ. Ռաբբիները միավորում են Մաղմոս 1 և 2-ը մեկ սաղմոսի մեջ: Սա կարելի է հաստատել՝
1. Գործք 13:33-ում, որը Մաղմոս 2-ը անվանում է «առաջին սաղմոս» (MS D և Հին Լատիներեն)
 2. «երանելի» բառի կիրառությունը Մաղմ. 1:1-ում և 2:12-ում հնարավոր է գրական տեխնիկա լինի, որը կոչվում է *inclusion*
 3. զարմանալիորեն ո՛չ Մաղմոս 1-ը, և ո՛չ էլ Մաղմոս 2-ը չունեն MT տարբերակում ներածական արտահայտություն:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 1:1-3

¹Երանելի է այն մարդը, որն անաստվածների խորհրդով չի ընթանում, մեղավորների ճանապարհում չի կանգնում, ո՛չ էլ հեգնողների աթոռին նստում. ²Այլ նրա հաճույքն Աստծո օրենքն է, գիշեր-ցերեկ Նրա օրենքի մասին է խորհրդածում: ³Նա լինելու է ջրի վտակներին

տնկված ծառի նման, որ իր պտուղը ժամանակին է տալիս . նրա տերևը չի թառամելու, և ինչ էլ որ անի, հաջողվելու է:

1:1-3 Կարծես թե այս բացման համարներում առկա է ժամանակի տարրերի պրոգրեսիա:

Երբայերեն ԲԱՅԵՐԸ չեն արտահայտում ժամանակ, այլ միայն կոնտեքստը: Հնարավոր է, որ՝

1. Սաղմոս 1:1-ի ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ ցույց են տալիս ժամանակ (այսինքն՝ ինչպես էր ապրում այդ անձը)
2. Սաղմոս 1:2-ի ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ ցույց է տալիս ընթացիկ ժամանակը (այսինքն՝ այդ անձի ամենօրյա ապրելակերպը)
3. համար 3-ը սկսում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՈՎ *վալ* –ով (տես՝ Հատուկ Թեմա . Երբայերեն քերականություն), որը կարող է ցույց տալ ապառնի վիճակը, ինչպես՝ երանելիությունը (այսինքն՝ ակնկալվող պտղաբերությունը):

1:1 «Երանելի» բառը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն ԵՆԹԱԿԱՆ՝ «մարդը» ԵԶԱԿԻ է: Սա կարելի է բացատրել՝

1. ՀՈԳՆԱԿԻՆ երբայական կերպ է, որով արտահայտվում է Աստծո օրհնությունները
2. «մարդը» ԵԶԱԿԻ ՀՈԳՆԱԿԻ Է, որը մատնանշում է բոլոր մարդկանց, ովքեր ճանաչում և հնազանդվում են Աստծուն (այսինքն՝ Հակ. 1:2-23): Այսպես է «ծառ» տերմինը կիրառվում Սաղմ. 1:3ա-ում:

Այս բառը («երանելի» BDB 80) նշանակում է «երջանիկ», «հարգված» կամ «ապահովված» (տես՝ Մատթ. 5:3-12):

Ոչ մի մարդ չի կարող «երջանիկ» լինել առանց Աստծո: Մենք ստեղծվել ենք Նրա կողմից և Նրա համար (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8): Քանի դեռ մեր փոխհարաբերությունը մեր Արարչի հետ աշխուժացված չէ, ֆիզիկական կյանքի մյուս բոլոր ոլորտները չեն կարող բերել իրական, հարատև երջանկություն: Այս փոխհարաբերությունն ունի տեսանելի առանձնահատկություններ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ (ԲԱՅ՝ BDB 138, ԳՈՅԱԿԱՆ՝ BDB 139 [ՀԿ])

SPECIAL TOPIC: BLESSING (VERB, BDB 138, NOUN, BDB 139)

ՀԿ-ում կան մի քանի տեսակ օրհնություններ (BDB 139): Երկու ամենատարածվածները հետևյալն են՝

1. Աստծո օրհնությունը՝
 - ա. Աբրահամի (և Նահապետների) միջոցով բոլոր ազգերը՝ Ծննդ. 12:3, 22:18, 27:29, Գործք 3:25, Գաղ. 3:8
 - բ. պայմանավորված ապաշխարությանը՝ Ելից 32:29, Հովել 2:14
 - գ. պայմանավորված ուխտի հնազանդությանը՝ Ղևտ. 25:21
 - դ. Աստծո հետ ճիշտ փոխհարաբերությունը բերում է բարգավաճում (այսինքն՝ անեծքները հակադրված օրհնությունների հետ), 2 Օր. 11:26,27,29, 23:5, 28:2,8, 30:1,19, Հեսու 8:34, Սաղմ. 133:3
 - ե. հնազանդ Իսրայելի վրա՝ 2 Օր. 12:5, 16:17, 32:13, Եսայի 44:3, Եզեկ. 34:25-31, Մաղ. 3:10-12
 - զ. Ղևտական քահանաների վրա՝ Եզեկ. 44:30, Մաղ. 3:3-4, 10-12
 - է. Դավթի և Մեսիական տոհմածառի վրա՝ 2 Թագ. 7:29, Սաղմ. 3:8, 21:3, 118:26 (տես՝ Մատթ. 21:9, 23:39, Մարկ. 11:9, Ղուկ. 13:35, 19:38, Հովի. 12:13)
 - ը. Աստծո կողմից ուղարկվածի վրա՝ Սաղմ. 118:26, 129:8
2. ծնողների օրհնությունը՝
 - ա. Իսահակը օրհնում է Հակոբին (խաբեությանը)՝ Ծննդ. 27:12, 18-29,35
 - բ. Հակոբը՝ Ծննդ. 49:3-27, 28-29

գ. Մովսեսը (իր փոխնակ ծնողները)՝ 2 Օր. 33:1-25

Աստծո խոսքը և դրանով իսկ հանդերձ Նահապետների բերանից դուրս եկած օրհնությունները դարձել են անկախ, ինքնատուրդորդվող գործություն՝ կատարելու իր նպատակը՝ Եսայի 55:11, 45:23, Մատթ. 24:35 (5:17-19), Մարկ. 13:31, Ղուկ. 21:33: Խոսված խոսքի գործությունը կարելի է տեսնել՝

1. Ստեղծագործության մեջ (այսինքն՝ «Նա ասաց . . .»)
2. Մեսիայի մեջ, որ կոչվում է «Խոսք»՝ Հովհ. 1:1,14, 1 Հովհ. 1:1, Հայտն. 19:13

Աստծո ամենամեծ օրհնությունը հենց Ինքն է: Նրա անձնական ներկայությունը մեր հետ և մեր համար է:

❖ Ուշադրություն դարձրե՛ք երեք *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԻՆ, որոնք մատնանշում են հատկանշական գործողություններ և վերաբերումնր (այսինքն՝ հաստատուն բնավորություն):

1. չի ընթանում անաստվածների խորհրդով
2. չի կանգնում մեղավորների ճանապարհի մեջ
3. չի նստում ծաղր անողների աթոռին

«Երանելի» հավատարիմ հետևորդը Սաղմ. 1:1-ում նկարագրվում է բացասումներով և Սաղմ. 1:2-ում՝ իրենց գործողություններով:

❖ «անաստվածների խորհրդով չի ընթանում» Սա խոսում է մարդու ապրելակերպի մասին: Ապրելակերպի վրա դրված այս շեշտադրումը հիմնավորվում է «ընթանալ /քայլել/ . . . կանգնել . . . նստել» ԲԱՅԵՐԻ կիրառությամբ: Մեր վրա ազդում է այն խումբը, որին պատկանում ենք՝ մեր հասակակիցները (տես՝ 1 Կորնթ. 15:33):

«Անաստված» /ամբարիշտ/ տերմինը (BDB 957) վերաբերում է ոչ միայն ակտիվ օրինազանցներին (այսինքն՝ արված ու չարված գործերի), այլ նաև նրանց, ովքեր Աստծուն իրենց կյանքերից դուրս են հանում (այսինքն՝ գործնական աթեիստները):

❖ «Տեր» Սա Իսրայելի Աստծո ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: THE NAMES FOR DEITY

Ա. *El* (BDB 42, KB 48)

1. Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է արքադական «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ. 17:1, Թվոց 23:19, 2 Օր. 7:21, Սաղմ. 50:1):
2. Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Շամրայի տեքստերը):
3. Աստվածաշնչում *El* հաճախ համադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ. 14:18-22, 2 Օր. 32:8, Եսայի 14:41
 - բ. *El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ. 16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր գթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ. 17:1, 35:11, 43:14, 49:25, Ելից 6:3
 - դ. *El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ. 21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ. 7:13, 16
 - ե. *El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ. 9:46
4. *El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
 - ա. YHWH (ՅԱՀՎԵ) Սաղմ. 85:8, Եսայի 42:5
 - բ. *Elohim* Ծննդ. 46:3, Հոր 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»

- գ. *Shaddai* Ծննդ.49:25
- դ. «նախանձոտ» Ելից 34:14, 2 Օր.4:24, 5:9, 6:15
- ե. «ողորմած» 2 Օր.4:31, Նեեմ.9:31
- զ. «հզոր ու ահարկու» (մեծ ու ահեղ) 2 Օր.7:21, 10:17, Նեեմ.1:5, 9:32, Դան.9:4
- է. «զիտություն» 1 Թագ.2:3
- ը. «իմ ամուր ապաստարան» 2 Թագ.22:33
- թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
- ժ. «սուրբ» Եսայի 5:16
- ի. «զորություն» Եսայի 10:21
- լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
- խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
- ծ. «հատուցում» Երեմ.51:56

5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. *Elyon* (BDB 751, KB 832)

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17, 3 Թագ.9:8, 4 Թագ.18:17, Նեեմ.3:25, Երեմ.20:2, 36:10, Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
 - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2, 73:11, 107:11
 - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22, 2 Թագ.22:14
 - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
 - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
 - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26, 4:2, 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
 - ա. Մեքիսեդեկ, Ծննդ.14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Մովսեսը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
 - դ. Դուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76, 6:35, 8:28, Գործք 7:48, 16:17)

Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵՉԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ (BDB 43, KB 52)

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չէք գտնի
2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6, 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեսու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դասավորներին (տես՝ Ելից 21:6, Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX), Սաղմ.8:5, Հոր 1:6, 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է *YHWH* –ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի *YHWH*-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5, *YHWH*, հհ. 2,6, նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն ՀՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵՉԱԿԻ թվով ԲԱՅԸ:
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատակությանը, ահա այդ տեսությունները.

- ա. Եբրայերենը ունի շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, հաճախ կիրառվող շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ ՀՈԳՆԱԿԻՆ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
- բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովհ.1:3,10, Հռոմ.11:36, 1 Կորնթ.8:6, Կող.1:15, Եբր.1:2, 2:10):
- գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում՝ Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում՝ Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3,10, Հռոմ.11:36, 1 Կորնթ.8:6, Կող.1:15, Եբր.1:2, 2:10):

Դ. YHWH (BDB 217, KB 394)

1. Սա այն անունն է, որը պատկերում է աստվածությանը որպես ուխտ կապող Աստծո, փրկիչ Աստծո, ազատագրող Աստծո: Մարդիկ ուխտադրույժ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Սաղմ.103):
 Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապստամբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:
2. Ծննդ.4:26-ում ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ (YHWH) անունը»: Համենայն դեպս, Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5, 27:36, 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ՝ 409-11):
 - ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
 - բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
 - գ. Ուգարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
 - դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
 - ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ, «Նա, որ ներկա է» (ապառնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
 - զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»
 - է. Եբրայերեն «ապրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է «հավերժ ապրողը, միակ ապրողը»
 - ը. Ելից 3:13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱՐ ժամանակով մի մասը կիրառված ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել այն ինչ միշտ եմ եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Չ. Ուոշ Ուաթս, *Ծարսիյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):
 - (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2, 17:16, Սաղմ.89:8, 104:35)
 - (2) *Yahu* ('iah' հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայի)
 - (3) *Yo* ('Jo' հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)
3. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այլապես կխախտեին Ելից 20:7, 2

Օր.5:11, 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին երբայերեն «սեփականատեր», «տեր» «ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:

4. Ինչպես *El*, *YHWH* բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.
- ա. *YHWH – Yireh* (YHWH Եհովա-Իրե՛ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14
 - բ. *YHWH – Rophekha* (YHWH Եհովա-Ռոֆեիա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26
 - գ. *YHWH – Nissi* (YHWH Եհովա-Նիսի՛ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15
 - դ. *YHWH – Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13
 - ե. *YHWH – Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24
 - զ. *YHWH – Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաովթ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11, 4:4, 15:2, հաճախ Սարգարեններում
 - է. *YHWH – Ro’I* (YHWH Եհովա-Ռոյ՛ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1
 - ը. *YHWH – Sidgenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՛ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6
 - թ. *YHWH – Shammah* (YHWH Եհովա-Շամմա՛ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35:

❖ **«մեղավորների ճանապարհ /արահետ/»** «Արահետ» բառի արմատում ընկած նշանակությունը «ճանապարհին» է (տես՝ Սաղմ. 1:6 /երկու անգամ/) և ապրելակերպի համար կիրառելու մեկ այլ տերմին է: ՆԿ-յան հավատարիմ հետևորդները սկզբում նկարագրվում էին որպես «Ճանապարհի» մարդիկ (տես՝ Գործք 9:2, 19:9,23, 22:4, 24:14,22): Սա ակնարկում է, որ աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան վարդապետության կամ ինչ-որ ծեսերի մասնակցության վրա շեշտադրությունը, այլ նաև հնազանդության ապրելակերպը և անձնական փոխհարաբերությունը (այսինքն՝ «քայլել», տես՝ Եփես. 4:1, 17, 5:2, 15):

❖ **«հեզնողների աթոռը»** Մենք բոլորս էլ ունենք կյանքի մասին կանխատեսադրություններ: «Հեզնողները» /ծաղրողները/ (BDB 539, KB 529, *Qal* ԴԵՐԲԱՅ) ներկայացնում է անկրոն վատատեսի կարծրատիպը (այսինքն՝ Ես. 5:19, Երեմ. 17:15, Եզեկ. 12:22, 27, Մաղ. 2:17, 1 Տիմ. 4:1, 2 Տիմ. 3:1-5, 2 Պետ. 3:3-4, Հուդա, Սաղմ. 1:18):

1:2 «նրա հաճույքն Աստծո օրենքն է» «Օրենք» տերմինը (BDB 435) նշանակում է «ուսմունք»: Սաղմոսներում «օրենքը» միշտ վերաբերում է Աստծո ընդհանուր ուսմունքներին (տես՝ Սաղմոս 119), ոչ թե պարզապես Մովսեսի գրերին: ՀԿ-ի հավատացյալի համար օրենքը բեռ չէր (տես՝ Սաղմ. 19:7-13), այլ ՅԱՀՎԵԻ հայտնությունը երկարակեցության, խաղաղության, ապահովության, ուրախության և առատության համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (կիրառելով ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅՐ ԵՎ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ)
SPECIAL TOPIC: TERMS FOR GOD’S REVELATION (using DEUTERONOMY and PSALMS)

- I. «Կանոններ», BDB 349, «օրենք, հրաման կամ կարգադրություն»
 Ա. ԱՐԱԿԱՆ ՍԵՌ, թԻ (KB, 346) – 2 Օր. 4:1,5,6,8,14,40,45, 5:1, 6:1,24, 7:11, 11:32, 16:12, 17:19, 26:17, 27:10, Սաղմ. 2:7, 50:16, 81:4, 99:7, 105:10,45, 148:6
 Բ. ԻԳԱԿԱՆ ՍԵՌ, թԻ (KB, 347) – 2 Օր. 6:2, 8:11, 10:13, 11:1, 28:15,45, 30:10,16, Սաղմ. 89:31, 119:5,8,12,16,23,26,33,48, 54,64,68,71,80, 83,112,124,135, 145,155,171
- II. «Օրենք» BDB 435, KB 1710, «հրահանգ» – 2 Օր. 1:5, 4:44, 17:11,18,19, 27:3,8,26, 28:58,61, 29:21,29, 30:10, 31:9, Սաղմ. 1:2, 19:7, 78:10, 94:12, 105:45, 119:1,18,29,34,44,51,53,55,61, 70,72, 77,85,92,97,109,113,126,136,142,150,153,163,165,174
- III. «Վկայություններ» BDB 730, KB 790, «աստվածային օրենքներ»
 Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ, ԴԵՄ - 2 Օրինաց 4:45, 6:17,20, Սաղմ. 25:10, 78:56, 93:5, 99:7, 119:22, 24,46,59,79,95,119,125,138,146,152,167,168
 Բ. ԴԵՄ կամ ԴԵՄ - Սաղմ. 19:7, 78:5, 81:5, 119:2,14,31,36,88,99,111,129,144,157
- IV. «Հրահանգներ» BDB 824, KB 959, «հրաման» - Սաղմ. 19:8, 103:18, 111:7, 119:4,15,27,40, 45,56,63,69,78,87,93,94,100,104,110,128,134,141,159,168,173
- V. «Պատվիրաններ» BDB 846, KB 622 – 2 Օր. 4:2,40, 5:29, 6:1,2,17,25, 8:1,2,11, 10:13, 11:13, 15:5, 26:13,17, 30:11,16, Սաղմ. 19:8, 119:6,10,19,21,32,35,47,48,60,66,73,86,96,98,115,127, 131,143,151, 166,176
- VI. «Դատաստաններ՝ վճիռներ» BDB 1048, KB 651, «որոշումներ» կամ «արդարադատություն» - 2 Օր. 1:17, 4:1,5,8,14,45, 7:12, 16:18, 30:16, 33:10,21, Սաղմ. 10:5, 18:22, 19:9, 48:11, 89:30, 97:8, 105:5,7, 119:7,13,20,30,39,43,52,62, 75,84,102,106,120,137, 149,156,160,164, 147:19, 149:9
- VII. «Նրա ճանապարհները» BDB 202, KB 231, ՅԱՀՎԵԻ ուղեցույցները Իր ժողովրդի կյանքի համար – 2 Օր. 8:6, 10:12, 11:22,28, 19:9, 26:17, 28:9, 30:16, 32:4, Սաղմ. 119:3, 5,37,59
- VIII. «Նրա խոսքերը»
 Ա. BDB 182, KB 211 – 2 Օր. 4:10,12,36, 9:10, 10:4, 17:19, 18:19, Սաղմ. 119:9,16,17,25,28, 42,43,49, 57,65,74, 81,89,101,105,107,114,130,139,147, 160,161,169
 Բ. BDB 57, KB 67
 1. «խոսք» - 2 Օր. 33:9, Սաղմ. 119:11,67,103,162,170,172
 2. «խոստում» - Սաղմ. 119:38,41,50,58,76,82,116,133,140,148,154
 3. «հրաման» - Սաղմ. 119:158

Սրանք բոլորն էլ վերաբերում են Աստծո Ինքն Իր մասին հատուկ հայտնությանը Իսրայելին: Դրանք հիմնականում հոմանիշներ են: Տե՛ս՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ՆԵՐՇՆՉԱՆՔ:

❖ «գիշեր-ցերեկ խորհրդածում է» Այս ԲԱՅԸ (BDB 211, KB 237, *Qal* ԱՆԱԿԱՏԱՐ) արտահայտում է ՅԱՀՎԵԻ հայտնված ճշմարտությունների «թերևս ընթերցանություն»: Հնում մարդիկ լռությամբ չէին կարդում, ուստի սա պետք է որ վերաբերի կամացուկ ընթերցանությանը:

Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է կիրառվում այս ԲԱՅԸ:

1. ՅԱՀՎԵԻ ուսմունքի շուրջ խորհրդածել՝ Սաղմ. 1:2, Հեսու 1:8
2. ՅԱՀՎԵԻ շուրջ խորհրդածել՝ Սաղմ. 63:6
3. ՅԱՀՎԵԻ գործերի շուրջ խորհրդածել՝ Սաղմ. 77:12, 143:5
4. վախերի շուրջ խորհրդածել՝ Եսայի 33:18

Ինչի՞ շուրջ ես դու խորհում:

Մեր մտավոր կյանքը մեր գործողությունների համար հարթակ են (տես՝ Առակ.23:7): Այս համարը շեշտադրում է Աստծուն և Նրա կամքը մեր գիտակցության մեջ պահելու հարատև սկզբունքը (այսինքն՝ գիշեր-ցերեկ): Սա եղել է 2 Օր.6:8-9-ում խորհրդապակերված սկզբնական նպատակը: Ես ներառել եմ այստեղ այդ համարներից մեկնաբանություն:

2 Օրինաց 6

2 Օր. 6:8 «դրանք որպես նշան կապի՛ր ձեռքիդ վրա, դրանք թող ճակատնոց լինեն աչքերիդ մեջտեղում» Սկզբում այս արտահայտությունը կարծես թե կիրառվել է որպես փոխաբերություն (տես՝ LXX): Համատեքստը Աստծո Խոսքը ապրելակերպով սովորեցնելու հնարավորություններն են: Սակայն ռաբբիները այս համարը ընդունել են հենց բառացիորեն և սկսել իրենց ձախ ձեռքին փաթաթել կաշվե ժապավեն, որին ամրացված է մի փոքրիկ տուփ (*tefillin*)՝ Թորայից ընտրված Սուրբգրային համարների պարունակությամբ: Նմանատիպ տուփիկ նաև փաթաթված, կապված էր նրանց ճակատին: Այս «ճակատնոցները» կամ «թևակապերը» (BDB 377) նաև նշված են 2 Օր. 11:18 և Մատթ. 23:5-ում:

2 Օր. 6:9 «Նաև քո տան դրանդիքի վրա և դռներիդ վրա գրի՛ր դրանք» Սա դարձյալ խորհրդանշական ժեստ էր, որ Աստված պետք է մաս ունենա ոչ միայն ձեր ընտանեկան կյանքում, այլ նաև սոցիալական կյանքում (այսինքն՝ դարպասը՝ դուռը, տես՝ 2 Օր. 21:19, 22:15,24): Ինչպես որ տան շենքը՝ դրանդիքը (BDB 265) հաճախ դիտարկվում էր հունական և հռոմեական աշխարհում որպես դիվական վայր, հրեական աշխարհում այն ներկայացնում էր Աստծո ներկայության վայրը (այսինքն՝ այն տեղը, որտեղ քվեց Չատկի արյունը, տես՝ Ելից 12:7,22,23):

«Քո դռներին» (BDB 1044) խոսքը հավանաբար վերաբերում է սոցիալական հանդիպումների և արդարության վայրին (այսինքն՝ ինչպես քաղաքի դռները): Սովորաբար փոքրիկ տուփերը և դռան վրա կատարած նշումները (*mezuzah*) պարունակում էին Սուրբ Գրքից մի շարք համարներ՝ 2 Օր. 6:4-9, 11:13-21 և Ելից 13:1-10, 11-16:

1:3 «Ժառի նման» Այս մասին մի ուշագրավ փոխաբերություն կա Երեմ. 17:5-8-ում: Անապատային հասարակության համար պտղաբեր ծառը գորության և բարգավաճման սիմվոլն էր:

❖ **ԲԱՅԸ** (BDB 1060, KB 1670, «ամուր տնկված», *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նշանակում է «փոխապատվաստված» (տես՝ Սաղմ. 92:14, Երեմ. 17:8, Եզեկ. 17:10,22, 19:10,13, Ովս. 9:13): Սա ակնարկում է, որ այս անձը՝ ինչպես բոլոր մարդիկ, սկզբնապես պտղաբեր հավատացյալ չէր: Հասունությունը ժամանակ, ջանք և հատկապես Աստծո շնորհքն է պահանջում: Պողոսը կիրառում է ՀԿ-յան տեքստերից մի աղոթք, լուսաբանելու մարդկանց մեջ բնակվող սկզբնական չարիքը Անկումից հետո (տես՝ Հռոմ. 3:10-18):

Մենք բոլորս էլ «փոխապատվաստվել» ենք ըմբոստությունից երանելիության մեջ:

❖ **«ջրի վտակներ»** Սա ՀՈԳՆԱԿԻ է և խոսում է մշակված ոռոգման համակարգի մասին:

❖ **«իր պտուղը ժամանակին է տալիս»** Սա սուրբգրային փոխաբերություն է նկարագրելու հասուն հոգևոր կյանքը (տես՝ Մատթ. 7:15-27): Հավատքի նպատակը համատարմությունն է: Նույնատիպ պատկեր առկա է Հայտնություն 22-ում վախճանաբանական միջավայրում:

❖ **«նրա տերևը չի թառամելու»** Սա էսկատոլոգիական թեմա է (տես՝ Եզեկ. 47:12, Հայտն. 22:2): Գյուղատնտեսական փոխաբերությունները շատ հզոր էին հողագործների և անասնապահների համար՝ կիսասանապատային տարածաշրջաններում:

1:3-4 «ինչ էլ որ անի, հաջողվելու է. . . այդպես չեն անաստվածները» Սա ՀԿ-յան տեսակետ է, որ ժամանակավոր օրհնությունները և անեծքները հիմնված էին հոգևոր կյանքի վրա (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28 և 30):

Սակայն սա պետք է բալանավորել Հոբի կյանքի հետ, Սաղմոս 37 և 73-ի հետ, և նաև ՆԿ-ի հայտնության հետ: ՀԿ-ը գործերի վրա հիմնված ուխտ էր, սակայն ՆԿ-ը շնորհքի վրա հիմնված ուխտ է (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38, Ռեփես. 2:8-10): Երկուսն էլ նախատեսված են ծնունդ տալու աստվածավախ հետևորդների, որոնք կորսվել են ՅԱՀՎԵԻ բնավորությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 1:4-6

⁴Այսպես չեն անաստվածները, այլ նման են հարդափոշու, որին հովն է ցրում: ⁵Սրա համար էլ անաստվածները դատաստանում չեն կանգնելու, ո՛չ էլ մեղավորները՝ արդարների հավաքում, ⁶քանզի Տերը գիտի արդարների ճամփան, իսկ անաստվածների ճամփան կորչելու է:

1:4 «նման են հարդափոշու» Սա տարածված սուրբգրային փոխաբերություն է անցողիկ, ժամանակավոր կամ կարճատև բաների համար (տես՝ Սաղմ. 35:5, 83:13, Հոր 21:18, Ես. 17:13, 29:5, 40:24, 41:15-16, Երեմ. 13:24, Ովս. 13:3):

Ամբարիշտների դատաստանը դիտարկելու երկու կերպ կա՝

1. Ժամանակավորը՝ առանց ուրախության, առանց բարգավաճման, վաղաժամ մահ (տես՝ Մատթևոս 7)
2. Էսկատոլոգիական՝ վախճանը – վերջին ժամանակվա դատաստանի տեսարանը, որտեղ մարդու հավիտենական ճակատագիրն է հայտնվում (տես՝ Մատթևոս 25, Հայտնություն 20):

1:5 «կանգնել» Այս ԲԱՅԸ (BDB 763, KB 840) ունի իրավական կարգավորման նշանակություն (տես՝ Առակ. 19:21, Ես. 14:24, ուշադրություն դարձրեք՝ Հռոմ. 8:31-38): Մեղավորները՝ ամբարիշտները չեն ունենալու՝

1. իրավունք իրենց վիճակը ներկայացնելու
2. իրավունք անգամ դատարանում ներկա գտնվելու
3. հնարավոր արդարացումներ
4. հույս դրական դատաստանի համար

❖ **«դատաստան»** Սա ակնարկում է, որ անհատ մարդիկ պատասխանատու են իրենց արարքների համար և մի օր Աստծուն հաշիվ են տալու (տես՝ Մատթ. 25:31-46, 1 Կորնթ. 3:10-15, Հայտն. 20:11-15): ՀԿ-ում այս ճշմարտությունը զարգացավ աստիճանաբար (տես՝ Հոր 19:25-27, Դան. 12:2):

❖ **«ամբարիշտները . . . մեղավորները»** Գոյություն ունեն մի քանի բնութագրական տիպոսներ տրված այն մարդկանց, ովքեր չեն «քայլում, կանգնում, նստում»:

1. ամբարիշտ՝ Սաղմ. 1:1,5,6 (BDB 957)
2. մեղավորներ՝ Սաղմ. 1:1,5 (BDB 308)
3. ծաղրողներ, հեզնողներ՝ Սաղմ. 1:1 (BDB 539)

NIDOTTE-ը հատոր 3, էջ՝ 1202, թվարկում է տարբեր երբայերեն տերմիններ, որոնք նկարագրում են նրանց, ովքեր չեն ճանաչում և չեն հետևում ՅԱՀՎԵին (այսինքն՝ անարդարը):

1. անօրինություն գործողներ՝ Սաղմ. 28:3, 92:7, 101:8, 141:9
2. չարագործներ՝ Սաղմ. 10:15, Առակ. 4:14, 14:19, 24:20
3. չար մարդիկ՝ Սաղմ. 10:15, Առակ. 4:14, 14:19, 24:20
4. դաժան մարդիկ՝ Հոր 15:20, 27:13, Ես. 13:11
5. մեղավորներ՝ Սաղմ. 1:1,5, 104:35
6. ծաղրողներ՝ Սաղմ. 1:1, Առակ. 9:7
7. ստախոսներ՝ Սաղմ. 58:3
8. օրինազանցներ՝ Առակ. 2:22, 21:18, Երեմ. 12:1, Ամբ. 1:13
9. թշնամի՝ Հոր 27:7, Սաղմ. 3:7, 17:9, 55:3

❖ «արդարների հավաքում» Ուշադրություն դարձրե՛ք այս արտահայտության և «դատաստանում» խոսքի միջև զուգորդությանը: Այս արտահայտությունները պետք է որ վերաբերեն ճշմարիտ, հավատարիմ հետևորդների ժողովին՝ հավաքին, որտեղ ամբարիշտները ընդունված չեն կամ չեն կարող խոսել:

«Հավաքը: կարող է վերաբերել՝

1. պաշտամունքի հավաքին (այսինքն՝ Սաղմ. 22:25, 35:18, 40:9-10)
2. մարդկանց համար տիտղոս՝ անուն (այսինքն՝ Ել. 12:3, 6, 19, 47, 16:1, 2, 9, 10, 22)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS

«Արդարությունը» այնպիսի կենսականորեն կարևոր թեմա է, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր ուսանող այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտողություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (ԲԱՅ, BDB 842, KB 1003. ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006): Միջագետքյան այս տերմինը ծագել է «գետի եղեգից», որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու համար: Նա ուղիղ է, Ում միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարացիությունը՝ շիտակությունը:

Մարդն Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ. 1:26-27, 5:1,3, 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար (այսինքն՝ Ծննդ. 3,8): Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի, սիրի, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդոց 3) և առաջին զույգը ձախողեց այս ստուգարքը: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ. 3:15, տես՝ Հատուկ Թեմա . ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը): Նա դա արեց Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ. 1:18-3:20, Հայտնություն 5):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու զղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38): Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողություններին (տես՝ Հռոմ. 3:21-31, Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցնե՛ր Իր ձեռքը, որպեսզի վերականգնե՛ր ուխտադրույթ մարդկանց: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ դատական արդարություն):
2. մարդկությանը ձրիաբար տալով արդարություն՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ վերագրված արդարություն):
3. ապահովելով Սուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը):
4. վերականգնելով Եդեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը (համեմատե՛ք Ծննդոց 1-2-ը Հայտնություն 21-22-ի հետ)

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է կտակին՝ ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ճրիաբար տալիս է այսինքն՝ Հռոմեացիներ 5:8, 6:23) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Սուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և հարատևորեն ճիշտ կերպով արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում» (այսինքն՝ Եփես. 2:8-9): Այն արժարժվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում այն սահմանվում է Պողոսի կողմից, որը 100 անգամից ավելի գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaiosunē* տերմինը Սեպտուագինտայում կիրառվող եբրայերենի *tsaddiq* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է Աստվածության և հասարակության սպասումներին՝ ակնկալիքներին (այսինքն՝ Նոյը, Հոբբ): Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդկությունը դառնում է նոր արարած (տես՝ 2 Կորնթ. 5:17, Գաղ. 6:15): Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահանո նոր ապրելակերպի (տես՝ Մատթեոս 5-7, Գաղ. 5:22-24, Հակոբոս, 1 Հովհաննես): Քանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չունեի հստակ սահմանագատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք թարգմանվում են անգլերենում որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) անկում ապրած մարդկության Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված լինելն է: Սա ի կատար անվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստինոսի տեսակետն է, որը ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն», տերմինը ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ հոլով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ հոլով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդոց 4 - Հայտնություն 20, Աստծո Եղեմի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք լուսաբանում են այս տերմինի հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հաճախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
 - ա. Գործք 3:14, 7:52, 22:14 (Մեսիայի անունը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2:1,29, 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
 - ա. Ղևտացիների 19:2
 - բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
 - ա. Հռոմեացիներին 3:21-31
 - բ. Հռոմեացիներին 4
 - գ. Հռոմեացիներին 5:6-11
 - դ. Գաղատացիներին 3:6-14
5. Աստծուց տրված՝
 - ա. Հռոմեացիներին 3:24, 6:23
 - բ. 1 Կորնթացիներին 1:30
 - գ. Եփեսացիներին 2:8-9
6. Հավատքով ընդունված՝
 - ա. Հռոմեացիներին 1:17, 3:22,26, 4:3,5,13, 9:30, 10:4,6,10
 - բ. 2 Կորնթացիներին 5:21
7. Որդու գործերի միջոցով՝
 - ա. Հռոմեացիներին 5:21
 - բ. 2 Կորնթացիներին 5:21
 - գ. Փիլիպեցիներին 2:6-11
8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝
 - ա. Մատթեոս 5:3-48, 7:24-27
 - բ. Հռոմեացիներին 2:13, 5:1-5, 6:1-23
 - գ. Եփեսացիներին 1:4, 2:10
 - դ. 1 Տիմոթեոս 6:11
 - ե. 2 Տիմոթեոս 2:22, 3:16
 - զ. Հովհաննես 3:7
 - է. 1 Պետրոս 2:24
9. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝
 - ա. Գործք 17:31
 - բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը բնորոշ է Աստծուն, որը Քրիստոսի միջոցով ձրի տրվել է մեղավոր մարդկությանը որպես՝

1. Աստծո պատվերը
2. Աստծո պարգևը
3. Քրիստոսի գործը
4. ապրելակերպը

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է հարատևությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ

Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությանը, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia* հետ դեմ-առ-դեմ իրադարձություն (տես՝ 1 Հովհ.3:2):

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի գեղեցիկ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառարանը և Նրա Նամակները* IVP /*Dictionary of Paul and His Letters from IVP*/ գրքից:

«Կալվինը, ավելի քան Լյութերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ առանձնահատկությունը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման առանձնահատկությունը: Կալվինը շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու զարմանահրաշ բնույթը» (էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

1. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կալվինի շեշտադրումը)
2. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Դրանցից որևէ մեկը գերազնահատվելու կամ թերազնահատվելու դեպքում ի հայտ կգան խնդիրներ:

- Մենք պետք է ընդունենք Հիսուսին:
- Մենք պետք է հավատանք Ավետարանին:
- Մենք պետք է հետամուտ լինենք Քրիստոսակերպությանը:

1:6 «ՏԵՐԸ գիտի» «Իմանալ» տերմինը նշանակում է «մտերմիկ անձնական փոխհարաբերություն» (տես՝ Ծննդ. 4:1, Երեմ. 1:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ (հիմնականում որպես պարադիգմ Բ Օրինացի կիրառմամբ)
SPECIAL TOPIC: KNOW (using mostly Deuteronomy as a paradigm)

Եբրայերեն «ճանաչել» (*yada*, BDB 393) բառը մի քանի *Qal* նշանակություն ունի (ստուգարանական):

1. հասկանալ բարին և չարը՝ Ծննդ. 3:22, 2 Օր. 1:39, Ես. 7:14-15, Հովնան 4:11
2. ճանաչել հասկանալով՝ 2 Օր. 9:2,3,6, 18:21
3. ճանաչել փորձառաբար՝ 2 Օր. 3:19, 4:35, 8:2,3,5, 11:2, 20:20, 31:13, Հեսու 23:14
4. խորհել՝ 2 Օր. 4:39, 11:2, 29:16
5. անձնապես ճանաչել
 - ա. անձի՝ Ծննդ. 29:5, Ելից 1:8, 2 Օր. 22:2, 33:9
 - բ. աստծո՝ 2 Օր. 11:28, 13:2,6,13, 28:64, 29:26, 32:17
 - գ. ՅԱՀՎԵԻՆ՝ 2 Օր. 4:35,39, 7:9, 29:6, Ես. 1:3, 56:10-11
 - դ. սեռական՝ Ծննդ. 4:1,17,25, 24:16, 38:26
6. սովորած հմտություն կամ գիտություն՝ Ես. 29:11,12, Ամոս 5:16
7. իմաստուն լինել՝ 2 Օր. 29:4, Առակ. 1:2, 4:1, Ես. 29:24
8. Աստծո գիտությունը՝
 - ա. Մովսեսի՝ 2 Օր. 34:10
 - բ. Իսրայելի՝ 2 Օր. 31:21

❖ «անասովածների ճամփան կորչելու է» Աստվածաբանական հարց է, թե ի՞նչ է նշանակում «կորչել» (BDB 1, KB 2):

1. կատարելապես գոյություն չունենալ (այսինքն՝ անհետացում)
2. երկրի վրա չհարատևելը՝ չմնալը (այսինքն՝ մահ)

Այս հարցը արվել է դժոխքի մասին մերօրյա քննարկումների ժամանակ: Որոշ ավետարանական գիտնականներ (այսինքն՝ Ջոն Սթոթը) պաշտպանում է դատաստանի շրջանը որպես մեղավորների բացակայության վայր՝ նրանց հավիտենական պատժի փոխարեն: Իմ խնդիրն այն է, որ այս նույն բառը՝ «հավիտյան» կիրառվում է Մատթ.25:46-ում, որը նկարագրում է թե՛ «պատիժը» և թե՛ «Էսկատոլոգիական կյանքը»: Ես չեմ կարող տեսնել, թե ինչպես կարող է ներշնչված գրողը նույն համարում միևնույն բառը կիրառել տարբեր իմաստներով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ (ՇԵՈՒ/ԴՃՈՂՔ, ԳԵՀԵՆ, ՏԱՐՏԱՐՈՍ)
SPECIAL TOPIC: WHERE ARE THE DEAD? (SHEOL/HADES, GEHENNA, TARTARUS)

I. Հին Կտակարան

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (համանման արմատներ գոյություն չունեն և ստուգաբանությունն անհայտ է, BDB 982, KB 1368), որը մահվան կամ գերեզմանի վերաբերյալ խոսելիս մի արտահայտվելու կերպ է, հիմնականում Իմաստասիրական Գրքերում և Եսայի մարգարեությունում: ՀԿ-ում այն ստվերոտ, գիտակից, սակայն ուրախությունից զուրկ կյանք է (տես՝ Հոր 10:21-22, 38:17):

Բ. *Sheol* բնութագրվում է՝

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր.32:22
2. դարպասներով բանտ, Հոր 38:17, Սաղմ. 9:13, 107:18
3. մի երկիր, որտեղից չեն վերադառնում, Հոր 7:9 (մահվան արքայերեն անունը)
4. խավարի երկիր՝ թագավորություն, Հոր 10:21-22, 17:13, 18:18
5. լռության վայր, Սաղմ. 28:1, 31:17, 94:17, 115:17, Ես. 47:5
6. կապված պատժի հետ նույնիսկ նախքան Դատաստանի Օրը, Սաղմ.18:4-5
7. կապված *Abaddon* (կործանման տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱԴԱԴՈՆ...ԱՊՈՒԼԻՈՆ) հետ, որտեղ Աստված նույնպես ներկա է, Հոր 26:6, Սաղմ.139:8, Ամովս 9:2
8. կապված «Գուբի» (գերեզման) հետ, Սաղմ.16:10, Ես.14:15, Եզեկ.31:15-17
9. ամբարիշտները ողջ-ողջ իջնում են *Sheol*, Թվոց 16:30,33, Հոր 7:9, Սաղմ.55:15
10. հաճախ մարմնավորվում է որպես մեծ երախ ուենցող կենդանի, Թվոց 16:30, Առ. 1:12, Եսայի 5:14, Ամբ.2:5
11. այդ վայրի մարդիկ կոչվում են Ռեփայիմներ՝ *Repha'im* (այսինքն՝ «մեռյալների հոգիներ»), Հոր 26:5, Առ. 2:18, 21:16, 26:14, Ես. 14:9-11
12. այնուհանդերձ ՅԱՀՎԵՆ ներկա է նույնիսկ այստեղ, Հոր 26:6, Սաղմ. 139:8, Առ. 15:11

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերենից *Sheol* թարգմանվում է հունարեն որպես *Hades* (աներևույթ աշխարհ)

Բ. *Hades* /դժոխք/ հատկանիշները (շատ նման է *Շեոլին*)՝

1. վերաբերում է մահվանը, Մատթ.16:18
2. կապ ունի մահվան հետ, Հայտն.1:18, 6:8, 20:13-14
3. հաճախ համանման է մշտական պատժատեղին (*Gehenna*), Մատթ.11:23 (ՀԿ մեջբերում), Ղուկ.10:15, 16:23-24
4. հաճախ համագոր է գերեզմանին, Ղուկ.16:23

Գ. Հավանաբար բաժանված (ոսբբիներ)

1. արդար մասը կոչվում է դրախտ (իրականում երկնքի համար մեկ այլ բառ, տես՝ 2 Կորնթ.12:4, Հայտն.2:7), Ղուկ.23:43
2. ամբարիշտ մասը կոչվում է *Tartarus/սարսարոս*, 2 Պետ.2:4, որը հանդիսանում է չար հրեշտակների պահման վայրը (տես՝ Ծննդոց 6, 1 Ենովք): Այն համադրվում է *Abyss* հետ՝ Ղուկ.8:31, Հռոմ. 10:7, Հայտ. 9:1-2,11, 11:7, 17:18, 20:1,3

Գ. *Gehenna/գեհենն*

1. Արտացոլում է ՀԿ-ի հետևյալ արտահայտությունը. «Հինոմի որդիների հարթավայրը» (Երուսաղեմի հարավում): Դա այն տեղն էր, որտեղ փյունիկեցիների կրակի աստծուն՝ *Molech* (Մողոքը, BDB 574, KB 591) երկրպագում էին մանկան զոհաբերությամբ (տես՝ 4 Թագ.16:3, 21:6, 2 Մնաց.28:3, 33:6), որն արգելված էր ըստ Ղևտ.18:21, 20:2-5:
2. Երեմիան փոխեց այն հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵի դատաստանատեղի (տես՝ Երեմ.7:32, 19:6-7): Այն դարձավ կրակե, հավիտենական դատաստանի վայրը 1 Ենովք 90:26-27 և Սիր.1:103
3. Հիսուսի օրոք հրեաներն իրենց նախահայրերի հեթանոսական երկրպագության մեջ մանկան զոհաբերության մեջ մասնակցություն ունենալուց այնքան ահաբեկված էին, որ այս վայրը նրանք դարձրեցին Երուսաղեմի համար որպես աղբանոց: Հավիտենական դատաստանին վերաբերող Հիսուսի տված փոխաբերություններից շատերը ծագում են այս աղբավայրից (կրակ, ծուխ, որդեր, զարշահոտություն, տես՝ Մարկ.9:44,46): *Gehenna* (Գեհենն) տերմինը օգտագործվել է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ.3:6):
4. Հիսուսի կողմից *Gehenna* բառի կիրառությունը.
 - ա. կրակ, Մատթ.5:22, 18:9, Մարկ.9:43
 - բ. մշտապես, Մարկ.9:48 (Մատթ.25:46)
 - գ. կորստյան վայր (թե՛ հոգու և թե՛ մարմնի), Մատթ.10:28
 - դ. *Sheol*-ին համարժեք, Մատթ.5:29-30, 18:9
 - ե. ամբարշտին բնութագրում է որպես «դժոճի որդի» Մատթ.23:15
 - զ. դատավճռի վախճանը, Մատթ.23:33, Ղուկ.12:5
 - է. *Գեհեննի* գաղափարը համարժեք է երկրորդ մահվանը (տես՝ Հայտն.2:11, 20:6,14) կամ կրակե լճին (տես՝ Մատթ.13:42,50, Հայտն.19:20, 20:10,14-15, 21:8). Հնարավոր է, որ կրակե լճը դառնա մարդկանց (*Sheol*-ից) և չար հեշտակների (*Tartarus /Տարսարոս/*, 2 Պետ.2:4, Հուդա հ. 6 կամ անդունդը, տես՝ Ղուկ.8:31, Հայտն.9:1-11, 20:1,3) համար հավերժական բնակավայր:
 - ը. այն նախատեսված չէր մարդկանց համար, այլ Սատանայի և իր հրեշտակների, Մատթ.25:41

Ե. Հնարավոր է, քանի որ *Շեոլը*, *Դժոճը* և *Գեհեննը* իրենց նշանակությամբ որոշ չափով համընկնում են, որ.

1. սկզբում բոլոր մարդիկ գնում էին *Շեոլ/Դժոճը*
2. այնտեղ ունեցած իրենց փորձառությունը (լավ/վատ) սաստկանում է Դատաստանի Օրվանից հետո, սակայն ամբարիշտների վայրը նույնն է մնում (այդ իսկ պատճառով KJV տարբերակը *hades* (գերեզման) բառը թարգմանում է որպես *gehenna* (դժոճը)
3. միակ ՆԿ-յան տեքստը, որը նշում է Դատաստանից առաջ տանջանքը Ղուկաս 16:19-31-ի առակն է (Ղազարոսը և հարուստը): *Sheol*-նկարագրվում է նաև ներկայիս համար մի պատժատեղի (տես՝ 2 Օր.32:22, Մաղմ.18:1-5): Ամեն դեպքում հնարավոր չէ առակի հիման վրա կառուցել վարդապետություն

III. Մահվան և հարության միջև ընկած միջանկյալ վիճակը

Ա. ՆԿ-ը չի սովորեցնում «հոգու անմահության» մասին, որը համարվում է հանդերձյալ կյանքի վերաբերյալ հնուց եկած մի քանի տեսակետներից մեկը:

1. մարդկանց հոգիները գոյություն ունեն իրենց ֆիզիկական կյանքից առաջ
2. մարդկանց հոգիները հավիտենական են ֆիզիկական մահվանից առաջ և հետո
3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտարկվում է որպես բանտ և մահը որպես ազատում՝ վերադառնալու նախաձեռնության վիճակին

Բ. ՆԿ-ը ակնարկում է մահվան և հարության միջև ընկած մարմնից հեռու՝ անջատ վիճակ

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանման մասին, Մատթ.10:28
2. Հնարավոր է Աբրահամը հիմա մարմին ունի, Մարկ.12:26-27, Ղուկ.16:23
3. Մովսեսը և Եղիան ունեին ֆիզիկական մարմիններ Հիսուսի այլակերպության ժամանակ, Մատթեոս 17
4. Պողոսը հայտարարում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսի հետ եղող հոգիները առաջինը կհագնեն իրենց նոր մարմինները, 1 Թեսաղ.4:13-18
5. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները ստանում են իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կորնթ.15:23,52
6. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները չեն գնում *Hades* /Դժոճք, այլ մահվան ժամանակ միանում են Հիսուսին, 2 Կորնթ.5:6,8, Փիլ.1:23: Հիսուսը հաղթեց մահին և արդարին Իր հետ տարավ երկինք, 1 Պետ.3:18-22:

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում կիրառվում է երեք իմաստով.

1. երկրից վեր գտնվող մթնոլորտը, Ծննդ.1:1,8, Ես.42:5, 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ.1:14, 2 Օր.10:14, Սաղմ.148:4, Եբր.4:14, 7:26
3. Աստծո գահատեղին, 2 Օր.10:14, 3 Թագ.8:27, Սաղմ.148:4, Եփես.4:10, Եբր.9:24 (երրորդ երկինքը, 2 Կորնթ. 12:2)

Բ. Աստվածաշունչը հանդերձյալ կյանքի մասին շատ բան չի հայտնում, հավանաբար նրա համար, որ անկում ապրած մարդկությունը ի գորու չէ, կամ հնարավոր չէ, որ հասկանա (տես՝ 1 Կորնթ.2:9)

Գ. Երկինքը թե՛ վայր է (տես՝ Հովհ.14:2-3) և թե՛ անձնավորություն (տես՝ 2 Կորնթ.5:6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդոց 1-2, Հայտնություն 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես՝ Գործք 3:21, Հռոմ.8:21, 2 Պետ.3:10): Աստծո պատկերը (Ծննդ.1:26-27) վերականգնված է Քրիստոսում: Այժմ կրկին հնարավոր է Եդեմի Պարտեզում տիրող մտերմիկ փոխհարաբերությունը:

Սակայն սա կարող է լինել փոխաբերական իմաստով (երկինքը որպես Հայտն.21:9-27-ի հսկայական, քառակուսի քաղաքը) և ոչ թե բառացի նշանակությամբ: 1 Կորնթացիների 15 գլուխը նկարագրում է ֆիզիկական և հոգևոր մարմինների տարբերությունը որպես հասուն բույսի սերմ: Կրկին, 1 Կորնթ.2:9 (մի մեջբերում Ես.64:4 և 65:17-ից) հրաշալի մի խոստում և հույս է: Ես գիտեմ, որ երբ տեսնենք Նրան, Նրա պես կլինենք (տես՝ 1 Հովհ.3:2):

V. Օգտակար աղբյուրներ.

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter* (Ուիլյամ Հենրիկսեն, *Աստվածաշունչը Հանդերձյալ Կյանքի Վերաբերյալ*)

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door* (Մորիս Ռոլինգս, *Մահվան Դռնից Այն Կողմ*)

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում «երկու ճանապարհ» արտահայտությունը:
2. Այս Սաղմոսից նկարագրե՛ք արդարի և ամբարշտի միջև տարբերությունը:
3. Բացատրե՛ք հետևյալ փոխաբերությունների կիրառությունը՝
 - ա. քայլել . . . ճանապարհով
 - բ. ծառ
 - գ. հարդափոշի
4. Այս Սաղմոսն ինձ սովորեցնում է էսկատոլոգիական, թե՛ ժամանակավոր դատաստանի մասին:
5. Ինչպե՞ս է այս Սաղմոսը կապված Հորի գրքի կամ Սաղմոս 37 և 73-ի հետ:
6. Ինչո՞ւ է այս Սաղմոսը համարվում որպես ներածություն ամբողջ Սաղմոսագրքի համար: